

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՀԱՐԿԱԴԻՐ ԲՈՒԺՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ
ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
Ելնելով պետական ինքնիշխանության սկզբունքից եւ փոխադարձ հարգանքի ու համագործակցության հիման վրա,
Ղեկավարվելով Նրանով, որ պետությունների իրավական համագործակցությունը պետք է նպաստի հարկադիր բուժվող անձանց հասարակություն նորմալ կյանքի վերադառնալուն,
ընդունելով, որ իրենց մշտական բնակության պետությունում հարկադիր բուժում անցկացնելը կնպաստեր նշված նպատակի ավելի արդյունավետ ձեռքբերմանը՝ ՄԱԿ-ի սկզբունքներին եւ չափանիշներին համապատասխան, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, որոնք անմեղսունակ վիճակում կատարել են հասարակայնորեն վտանգավոր արարք, որոնց նկատմամբ առկա է դատարանի որոշումը, դրանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադիր միջոցների կիրառման մասին մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, այդ Պայմանավորվող կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, հարկադիր բուժում անցնելու համար փոխանցվում են այն պետությանը, որի քաղաքացիներն են նրանք կամ որի տարածքում մշտապես բնակվում են (եթե քաղաքացիություն չունեցող անձինք են):

ՀՈՂՎԱԾ 2

Հարկադիր բուժում անցնելու համար անձի փոխանցումը իրականացվում է, եթե.
ա) բժշկական բնույթի հարկադիր միջոցների կիրառման մասին դատարանի որոշումը մտնում է օրինական ուժի մեջ,
բ) հարկադիր բուժման ուղարկված անձը կատարել է երկու Պայմանավորվող կողմերի օրենսդրություններով քրեորեն պատժելի արարք,
գ) երկու Պայմանավորվող կողմերի օրենսդրություններով նախատեսված են բժշկական բնույթի համանման միջոցներ,
դ) ընդունող Պայմանավորվող կողմը հնարավորություն ունի ապահովել անհրաժեշտ բուժում եւ անվտանգության համապատասխան միջոցներ,
ե) ստացվել է հիվանդի համաձայնությունը, իսկ ազատ կամաարտահայտվելու անհնարինության դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը:

ՀՈՂՎԱԾ 3

Հարկադիր բուժում անցկացնելու համար անձանց փոխանցումը իրականացվում է ինչպես այն Պայմանավորվող կողմի դիմումով, որի դատարանը որոշում է ընդունել, այնպես էլ այն Պայմանավորվող կողմի դիմումով, որի քաղաքացին է կամ որի տարածքում մշտապես բնակվում է:
Պայմանավորվող կողմի անունից դիմող լիազոր անձ է հանդիսանում իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:
Հարկադիր բուժման ենթակա անձը, նրա օրինական ներկայացուցիչը, ինչպես նաեւ մերձավոր ազգականները իրավունք ունեն դիմում ներկայացնելու Պայմանավորվող կողմերից ցանկացածի իրավասու մարմին՝ փոխանցելու գործում իրենց շահագրգիռ լինելու մասին:

ՀՈՂՎԱԾ 4

Դիմումը կազմվում է գրավոր: Դրան կցվում են.

- ա) փոխանցվողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- բ) անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադիր միջոցների կիրառման մասին դատարանի որոշման եւ դրա օրինական ուժի մեջ մտնելու մասին փաստաթղթի հաստատված պատճենները,
- գ) դատահոգեբանական փորձաքննության ակտի հաստատված պատճենը,
- դ) բուժման փոփոխման վերաբերյալ հոգեբանական քննման ակտի հաստատված պատճենը,
- ե) "ՎՏԷԿ" տեղեկանքը,
- զ) քրեական օրենսգրքի հոդվածների տեքստը, որոնց հիման վրա անձին մեղադրանք է առաջադրվել,
- է) հիվանդի կամ նրա ներկայացուցչի գրավոր համաձայնությունը հարկադիր բուժում անցնելու նպատակով այն պետություն փոխանցելու համար, որի քաղաքացին է նա կամ որի տարածքում մշտապես բնակվում է,
- ը) մերձավոր ազգականների հայտարարությունը, եթե այն առկա է,
- թ) հիվանդի քաղաքացիության, նրա մշտական եւ ժամանակավոր բնակության վայրի մասին վկայող փաստաթղթերը,
- ժ) հիվանդի ազգականների մասին տեղեկություններ,
- ժա) այլ փաստաթղթեր եւ տեղեկություններ, եթե դա անհրաժեշտ համարեն Պայմանավորվող կողմերը,
- ժգ) դիմումի եւ դրան կից փաստաթղթերի հաստատված թարգմանությունը:

ՅՈՒՐԱԿՐԻ 5

Անձի փոխանցման կամ ընդունման համաձայնության (մերժման) մասին որոշումը ընդունում է իրավասու մարմնի ղեկավարը դիմումի ստացումից առնվազն 40 օրվա ընթացքում եւ ուղարկվում է մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի ղեկավարին:

Ընդունված որոշման մասին գրավոր հայտնվում է այն անձին, որի վերաբերյալ դիմում է ուղարկվել նրա օրինական ներկայացուցչին:

ՅՈՒՐԱԿՐԻ 6

Սույն Կոնվենցիայի հարցերով Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են անմիջականորեն:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ավանդապահին է հայտնում իր իրավասու մարմնի անվանումը:

ՅՈՒՐԱԿՐԻ 7

Անձի փոխանցման վայրը, ժամանակը եւ կարգը որոշվում են երկու Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջև պայմանավորվածությամբ:

Փոխանցումը իրականացվում է հաշվի առնելով այն, որ տեղափոխումը բացասաբար չազդի հիվանդի վիճակի վրա, չհանգեցնի փախուստի կամ որեւէ վտանգավոր արարքի կատարման:

ՅՈՒՐԱԿՐԻ 8

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ թույլատրում է իր տարածքով սույն Կոնվենցիային համապատասխան փոխանցվող անձանց տարանցիկ փոխադրումը երրորդ Պայմանավորվող կողմին: Նման փոխադրումը թույլատրվում է այն պետության խնդրանքով, որի քաղաքացին է այդ անձը:

ՅՈՒՐԱԿՐԻ 9

Անձի փոխանցման հետ կապված ծախսերը, որոնք ծագել են մինչեւ նրա փոխանցումը, կրում են այն Պայմանավորվող կողմերը, որոնց մոտ դրանք ծագել են:

Անձի փոխանցման, այդ թվում նրա տարանցիկ փոխադրման հետ կապված հետագա ծախսերը, կրում է այն Պայմանավորվող կողմը, որը ընդունել է այդ անձին՝ հարկադիր բուժում անցկացնելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 10

Փոխանցված անձի վերաբերյալ դատարանի որոշումը վերանայելու իրավասու է միայն որոշում կայացրած Պայմանավորվող կողմը:

Հարկադիր բուժման ուղարկված անձը չի կարող կրկին ենթարկվել քրեական պատասխանատվության այն Պայմանավորվող կողմի տարածքում, որն իրեն ընդունել է բուժման անցկացման համար, այն նույն արարքի համար, որի հետ կապված նա անմեղտունակ է ճանաչվել, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Եթե հարկադիր բուժում անցկացնելու համար անձի փոխանցումից հետո Պայմանավորվող կողմի պետությունում դատարանի որոշումը, որտեղ այն ընդունվել է, վերացվել է եւ նախատեսված է նոր քննություն կամ դատաքննություն, դրա մասին որոշման պատճենը, քրեական գործի նյութերը եւ այլ լրացուցիչ փաստաթղթեր ուղարկվում են այդ անձին ընդունած Պայմանավորվող կողմին՝ այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նրան պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

Դատարանի որոշման փոփոխության դեպքում Պայմանավորվող կողմը, որտեղ այդ որոշումը կայացվել է, անհապաղ տեղեկացնում է դրա մասին հարկադիր բուժման համար անձին ընդունած Պայմանավորվող կողմին:

Բժշկական բնույթի հարկադիր միջոցների վերացման կամ փոփոխության անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով հարկադիր բուժվող անձի հոգեկան վիճակի փոփոխությունները բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, բժշկական բնույթի հարկադիր միջոցների վերացման կամ փոփոխության վերաբերյալ համապատասխան որոշումը իրավունք ունի ընդունելու հարկադիր բուժում անցնելու համար անձին փոխանցած Պայմանավորվող կողմի դատարանը կամ հարկադիր բուժման անցման վայրի Պայմանավորվող կողմի դատարանը: Ընդունված որոշման մասին գրավոր տեղեկացվում է մյուս Պայմանավորվող կողմը:

ՀՈՂՎԱԾ 11

Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են նաեւ այն անձանց նկատմամբ, որոնք մինչեւ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը ուղարկվել են հարկադիր բուժման:

ՀՈՂՎԱԾ 12

Սույն Կոնվենցիան Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ բաց է այլ պետությունների կողմից միանալու համար:

Միացած Կողմերի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից նման միանալուն համաձայնության մասին վերջին հաղորդումը ստանալուց հետո երեսուներորդ օրը:

ՀՈՂՎԱԾ 13

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Պայմանավորվող կողմերի համար, որոնց օրենսդրությունը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար պահանջում է ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան ծանուցումը հանձնելու օրվանից: Նման ընթացակարգերի կատարման անհրաժեշտության մասին Պայմանավորվող կողմերը սույն Կոնվենցիայի ստորագրման պահից երեք ամսվա ընթացքում ծանուցում են ավանդապահին:

Կոնվենցիան կնքվում է 5 տարի ժամկետով: Այդ ժամկետի ավարտից հետո Կոնվենցիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամկետով:

ՅՈՒՐԱԿՐԻ 14

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ գրավոր ծանուցում ուղարկելով այդ մասին ավանդապահին: Այդ Պայմանավորվող կողմի համար Կոնվենցիան կորցնում է ուժը՝ ավանդապահի կողմից դուրս գալու մասին ծանուցումը ստանալուց երեք ամիս հետո:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1997 թվականի մարտի 28-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 20-ից: